ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

05.04.2011 09:43

ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից Մաքսիմ Պետրոսյանի նկատմամբ 2011 թվականի մարտի 20-ին կայացված որոշման կապակցությամբ Լոռու մարզի դատախազ Կարեն Շահբազյանը 2011 թվականի մարտի 22-ին հրավիրել է մամլո ասուլիս, որտեղ քննարկման առարկա է դարձրել դատարանի կողմից կայացված և դեռևս օրինական ուժի մեջ չմտած որոշումը, այն որակել է անհիմն, իսկ անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքից օգտվող անձին՝ Մաքսիմ Պետրոսյանին անվանել է “մարդասպան”: Բացի այդ, նա դատարանին ըստ էության խորհուրդ է տվել առաջնորդվել հասարակական կարծիքով՝ այն դեպքում, երբ դատարանը պարտավոր է առաջնորդվել միայն Սահմանադրությամբ և օրենքներով և ոչ թե հասարակական կարծիքով:

Լոռու մարզի դատախազը, ի պաշտոնե հայտարարությունով հանդես գալով, անկողմնակալ դիտորդի՝ հանրային լսարանի առջև, չի հարգել Դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը՝ ակնհայտորեն դրսևորելով ոչ հարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ և կասկածի տակ դրել դատական ակտի օրինականությունը: Միաժամանակ դատախազի հայտարարությունն անկողմնակալ դիտորդների համար ձևավորել է Դատարանի նկատմամբ ճնշում գործադրելու ընկալում:

Նշված հայտարարության կապակցությամբ հանդես են եկել նույն մարզի թվով 23 փաստաբանները, հայտնելով այն դիրքորոշումը, որ դատախազը կոպիտ կերպով խախտել է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կողմից վավերացված՝ միջազգային փաստաթղթերով ամրագրված անմեղության կանխավարկածի հայտնի սկզբունքը, ինչպես նաև իր հրապարակային ելույթով ճնշում է գործադրել դատարանի վրա:

Հարկ ենք համարում Լոռու մարզի դատախազ Կարեն Շահբազյանին հիշեցնել, որ ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատախազը պարտավոր է հարգել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը և մասնավորապես՝ չպետք է իր գործողություններով կասկածի տակ դնի դատական ակտի օրինականությունը կամ խոչընդոտի դրա կատարմանը, բացառությամբ դատական ակտի բողոքարկման իր իրավունքն իրագործելիս:

Նկատի ունենալով, որ ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն նախատեսում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվություն առաջացնելու պահանջը, իսկ “Դատախազության մասին” ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերից է՝ իր լիազորություններն իրականացնելիս Օրենքը կոպիտ խախտելը, իսկ սույն դեպքում առավել քան ակնառու է Օրենքի՝ ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի խախտման դեպքը, կարևորելով մասնագիտական պարտականությունները կատարելիս զսպվածություն դրսևորելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության դատավորների միության խորհուրդը.

- անընդունելի է համարում Լոռու մարզի դատախազ Կարեն Շահբազյանի կողմից դատական ակտի օրինականությունը հրապարակայնորեն կասկածի տակ դնելը՝ այն համարելով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում.
- կոչ է անում իրավակարգը պաշտպանող բոլոր պաշտոնատար անձանց, դատարանների կողմից կայացվող որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում օգտվել դատական ակտը բողոքարկելու իրենց իրավունքից և ձեռնպահ մնալ դատական ակտի օրինականությունը

հրապարակայնորեն կասկածի տակ դնելու արատավոր պրակտիկայից.
- հեռու մնալ ցանկացած միջոցով, այդ թվում՝ մամուլի ասուլիսների միջոցով դատարանի վրա ճնշում գործադրելու փորձերից.
- անշեղորեն պահպանել ՀՀ Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված անմեղության կանխավարկածի հիմնարար պահանջը.
- ակնկալում է, որ ՀՀ գլխավոր դատախազը քննարկման առարկա կդարձնի Լոռու մարզի դատախազ Կարեն Շահբազյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԳ ՀՀ Փաստաբանների պալատը միանում է ՀՀ դատավորների միության խորհրդի հայտարարությանը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })